


Հ Ա Ս Յ Է

Rédaction du Journal arménien
ARCHALOUYCE
(EGYPTE) LE CAIRE



ՊԼԱՏՈՆԵՔ

ԵՂԻՊՏՈՍ

Տարեկան դրոշմը

30

ԱՐՏԱՍՏՆԱՆ

Տարեկան փրակը

10

Բաժանորդ ՅԱԻԵԼՈՒՍ ԵՆՐՈՒ փոխադրելով
վճարում է գերծ պիտի ըլլան .

Ձի հրատարակումս ձեռագիրները
ես չե՛մ տրուիր :

Բաժանորդագրութիւնը կանխիկ է, իսկ
ծանուցումները կ'ընդունուին մասնա-
ւոր համաձայնութեամբ :

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա Ն Կ Ա Ի Հ Ա Յ Ա Ք Ե Ր Ք

Թե՛ ԱՐՇԱԼՈՍՍԻ և թե՛ ՏՊԱՐԱՆԻՆ
վերաբերեալ ներքակա խնդրոց հանար
պիտի է զիմեղ խնդրութեան հասցեով
քերթիս Մասնախարարին, որ է՛

Քարտ -- ներ - ներքադրութեան
ԵՂԻՊՏԻ ՓՈՐՈՍՆԱՆ

ՉՈՐԻ ՓՈՒԿԱՐԵՆՆ

ԿԸ ՇՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔԵԱՔԹԻ ՕՐԵՐԸ

Յօդուածագիրներ ուղղակի պատասխանա-
տու են իրենց գրածներուն

ZUSZ 20 ՓԱՒԱ ՈՂՁ

ՎԵՐՍՏԻՆ ՅԱԻԵԼՈՒՍԻ ՍԱՀՄԱՆԱԿՐՈՒԹԵԱՆ ԾՈՒՐՁ

Այս սահմանափակ էջերուն մէջ
տասնեակ մը և աւելի տարիներէ
հետէ Ազգ. Սահմանադրութեան
կուրծքին վրայ բացուած վէրքե-
րուն բնութեան և յառաջխաղացու-
մէն լիակատար մէկ ուսումնասի-
րութիւնը ընել իրաւամբ ծիծաղելի
պիտի համարուէր :

Մեր նախորդ երկու յօդուած-
ները շատ քիչ բան կ'ընէին այս
մասին . թէ և ատենց պարունակու-
թիւնը ոմանց նուազ հաճելի թուած
ըլլայ, և ուրիշ մէկ քանիներու ալ
տրամաբանութեան գլուխ գործոց :

Հայերուս մէջ սովորութիւն ե-
ղած է որ՝ հրապարակաւ յայտնու-
ած կարծիք մը քննադատութեան
փետրտուքին տակ դնելէ առաջ
անոր հիմքերուն վրայ չի մտածենք
-եթէ իսկապէս մտածել ալ գիտենք-
այլ՝ շարժելին կը նային որ ո՛ր և
է մէկը մեզմէ առաջ այդ գրուած-
քի մասին աննպաստ կարծիք մը
յայտնէ՝ եթէ կուզէ անհիմն թող
ըլլայ այն . ալ մեր ճամբան հար-
թուած է ասոր շարունակութիւնը
իր բոլոր անտեղի կողմերովը լրացը-
նելու համար :

Ոմանց հաճելի երևցած չէ անց-
եալ թիւերով Գահիրէի Երեսփո-
խան ժողովոյ Վսեմ. Ատենապետին
« ծայրահեղ օրինասերի » հակումնե-
րը մատնացոյց ընելին : Սակայն
այդ պարոնները՝ եթէ Ատենապետ
Բաշային ստացած Երեսփոխան բար-
ձր կրթութիւնը, նուրբ կենցաղա-
գիտութիւնը, և ատենց յարակից
հանգամանքները ինկատի ունենա-
յին, մեզի ո՛ր և է կերպով մեղադ-
րել չի փորձել զատ, հայերուս մը
տածելակերպին միջակութիւն ար-
տաբուրոյ խոնարհագոյն աստիճան-
ներու վրայ կանգ առած ըլլալն
ալ պիտի խոստովանէին :

Հակառակ որ Ատենապետ բա-
շան Երեսփոխան ճոխ զարգացում
մը միտերած է իր ուղիղին մէջ,
եթէ քիչ մը հետաքրքիր աչքով
դիտենք անոր հակումները դէպի
ազգային բարձրագոյն իշխանութիւ-
նը ներկայացնող կղերը, նախապա-

շարուծի և մինչև իսկ ընազանցա-
կան զգացումի պիտի կրնանք վե-
րագրել այդ կենցաղագիտական վե-
րաբերումը :

Մեզմէ ո՛ր մէկը նիւթապէս և
այլ տեսակետներով անոր հաւա-
սարող դիրք մը ստեղծել կարենա-
լէն յետոյ՝ եկեղեցին, Ազգը և ա-
նոր մեծ ու պղտիկ պաշտօնեաները
պիտի յիշէ ու յարգէ ա՛յնչափ, որ-
չափ Բաշան զիտէ յարգել : Նա
այդպէս ուսած է իր հօրմէն, և իր
կենցաղագիտութիւնը արմատացու-
ցած է զայն իր մտքին մէջ :

Այս տղերքը պատրաստողը ան-
ձամբ աւելի ունեցած և տեսած է
որ նուազ բաշա, նախարարապե-
տի պաշտօնին մէջ իսկ, երկիւղած
յարգանքով մը խոնարհած է անա-
ւային նուիրագործող Տէր Կարա-
պետ քէնյի. առջև և նոյն իսկ ալը
համբուրել ուղած է : Այս մեծա-
բանքի արտայայտութիւնը Ապարան-
քին դուրսի գուռը տեղի կուենար.
այնպէս որ՝ նախարարապետին դու-
ռը հսկող երկու տեղացի շքասպետ-
ները՝ յապուշ կրթեցան և շուա-
րեցան, տեսնելով որ իրենց Կուռա-
վարութեան ղեկավարը - Մեծն Նու-
պար-անձօրուս տէրտէրի մը մինչև
իսկ ալը համբուրելու շար կը խո-
նարհի : Անցողաբար ըսենք թէ՛ Նու-
պար բաշա ուրիշ տկարութիւն մ'ալ
ունէր՝ բաղաթուղթի (բասենց) հաւաստ
կ'ընծայէր . . . :

Ո՛վ կրնայ ըսել թէ՛ նա զար-
գացումէ զուրկ մէկն էր : Ո՛չ ա-
պաքէն ամբողջ Երեսփոխան Գիւտան-
գիտական շրջանակներուն մէջ մեծ
հուշակ հանած՝ և անոր մտքին ու
հանճարին բարձրութիւնը ամեն տա-
րախոյսէ վեր մնացած էր : Բայց իր
նըբացած կենցաղագիտութիւնը այն-
պէս թոյլ կուտար իրեն որ յար-
գանքով վերաբերուի դէպի իր ազ-
գին կղեր ներկայացուցելը : Տէր
Կարապետ քէնյ. այն ժամանակ Ա-
ռաջնորդական տեղապահ էր, և եր-
բեմն կը պարծենար թէ իր անանա-
չիին ուժով մեծ գործեր կարգադ-
րած էր . . . :

Միջակեալ օրինակ մը այդ մեծ
գործերէն : Աւելի աննխորդ մը :

Առաջնորդարանի մէջ ի պահ
թողուած անտուկի մը բա՛ց թէ գոց
եղած ըլլալը խնդրոյ առարկայ դար-

ձած է եղեր յանցելուն : Մերոպ
Նախկողմի սնտուկը՝ եթէ չենք
սխալիր : Տէր Կարապետ հօր առա-
ջարկուած է որ՝ իբրև Առաջնորդա-
կան տեղապահ՝ այդ սնտուկին գոց
եղած ըլլալը հաստատող արձանա-
գրութիւն մը կնքէ և վաւերացնէ :
Գիտէք որ մեր Առաջնորդարանին
մէջ գտնուած սնտուկներուն ո՛չ բաց
և ո՛չ ալ գոց ըլլալը յայտնի է :
Տեղապահը կը կնքէ ու կը վաւե-
րացնէ . . . սնտուկին բա՛ց եղած ըլ-
լալը : Ի վերջոյ երբ միեւնոյն սըն-
տուկին խնդիրը քիչ մը սուր կեր-
պարանք կ'ստանայ, հարկ կ'ըլլայ
այդ սնտուկին բաց ըլլալը հաստա-
տող վաւերացում մ'ալ ընել . այն
ատեն՝ Տէր Կարապետ տեղապահը՝
ուրիշ արձանագրութեան մը ներ-
քև սնտուկին բաց ըլլալը վաւերա-
ցընող թուղթ մը կ'ստորագրէ ու
կը կնքէ . . . :

Ժամանակը կանցնի, դէպքե-
րը կը յեղաշրջին, սնտուկին բաց ան
ու « գոց » ը մտուցուած է ալ, Տէր
Կարապետ այդ նշանաւոր դէպքը իբր
զուարճալիք պատմել կսկսի : Այրդը-
նայ Տէր գալիս յարգելու Տէր ինկա
իքսիւ ըսելով . . . Ի՛նչ հակադրու-
թիւն : Այս մաքաղութեայ դէմքը
նուազ բաշան աւելի՛ զարգացած
էր պիտի ըսենք . . . :

Հիմայ ուզողը թո՛ղ եղրակացը-
նէ թէ՛ նուազ բաշա մը՝ եզրու-
տական Կառավարութեան նազը
նուզողը՝ ի՛նչ նկարագրի տէր մէ-
կուն առջև կը խոնարհի, անոր ազ-
գային պաշտօնատան ներկայացուց-
չի դիրքը ի նկատի ունենալով . . . :

Բնականաբար նուազ բաշայի
այդ կենցաղագիտական զգացումնե-
րը իր որդին վսեմ. Պողոս բաշա ալ
իւրացուցած է՝ ու այնպէս ալ է :
Ահա թէ ու՛ր տեղէն կ'օգտուի Օր-
մանեան Պատրիարք՝ իր մտացածին
հրահանգները տեղադրելու համար
եզրուտութի մէջ, միշտ նորին Վսե-
մութեան անունին ետեւը ապաստա-
նելով :

Ամենքս ալ գիտենք որ՝ Պոլ-
սոյ Կեդր. Վարչութեան Երեսփո-
խան շուրջ և գուժարուներ տեղի
չեն ունենար :

Սահմանադրութեան հիմնական
օրէնքներուն մէջ փոփոխութիւն

մտցնելու ատեն պատրիարքը ո՛ր ժողով
վին հաւանութեանը և վաւերացումին
դիմած է : Ո՛չ ապաքէն Պոլսոյ Ե-
րեսփոխանութիւնն է որ Սահմանա-
գրութիւնը բարեփոխելու ձեռնհա-
տութիւնը ունի, այն ալ եթէ օրի-
նական մեծամասնութեամբ գու-
մարուի, կամ կարելի ըլլայ գու-
մարել : Բայց ի՛նչու Երեսփոխանու-
թիւնը Պոլսէն զատ ուրիշ ազատ
տեղ մը գուժարելու ջանքեր ալ
չեն լինիր, միթէ միջոցներ կը
պակսին . . . :

Արեւմտ. Պատրիարքը՝ ո՛ր ժո-
ղովին հաւանութեամբ և օրինաց
ո՛ր յօդուածին տրամադրութեամբ
Գահիրէի Երեսփոխանութեան թիւը
16 էն 18 ի կը բարձրացնէ, մէկ
աշխարհականի և մէկ եկեղեցական-
ի յաւելումով : Ի՛նչ հայու կայ
այսպիսի ապօրինի օրինատուութեան
մը մէջ :

Գահիրէի Երեսփ. ժողովոյն 16
կամ 18 անգամէ բաղկացեալ ըլլա-
լուն խնդիրը առ այժմ մէկ կողմ
դնենք :

Գաղաքիս մէջ քանի՞ կղեր կայ
արդէն որ գտնուածներուն վրայ Ե-
րեսփոխան ժողովին անգամակցե-
լու համար մէկ հատ ալ պիտի ճար-
ուի սարէն ու ձորէն . . . :

Օրէնքի և խղճի թելադրանք-
ները մեզի թոյլ կուտան ըսելու թէ՛
եզրուտութի մէջ մէկ հատ քահանայ
չ'կայ որ բացարձակ իրաւունք ու-
նեցած ըլլայ Երեսփ. ժողովին ան-
գամակցելու, որովհետև ամենն ալ
իրենց հօտը լքանելով բաղախնդ-
րութեան գուժարանը ձեռքերնին
քեզի երեսից եկողներ են : Երեսփո-
խան ժողովին կրնան անգամակցել
այն կղերները՝ որոնք ժողովուրդին
« արժանի է » ձայնին ուժովը տեղ-
ւոյն վրայ ձեռնադրուած են : Ո՛վ
չ'գիտեր թէ՛ քահանայ մը ձեռնա-
դրուած ատեն եթէ ժողովուրդէն
մէկ հոգի միայն « արժանի չէ . . . »
աղաղակէ, ձեռնադրութիւնը ետ
կը մնայ . . . :

Երեսփոխանք պահ մը թէ՛ « վե-
ճակաւ դադարեալ » Երեսփոխաննե-
րուն երկուքը փոխանակ երկու աշ-
խարհական ըլլալու, ինչպէս այս
տարի Պողոս բաշա և Մարկոս Գէյ
էին, երկու կղեր ըլլալին, Տէր Յա-
րութիւնը և Տէր Մամբրէն . Բայց

ատոնք ինքնին վերնորելի պիտի ըլլային, որովհետև ուրիշ կղեր չը կար ատոնց տեղը ընտրուելու համար, ուրեմն օրէնքին ուժը չ'գոյութեան առջև կ'ոչնչանար և Կահրէի կղերները՝ եթէ մասնիչներ և անբարոյականներ ալ ըլլային, առանց ո՛ր և է քուէի սպասելու, առանց արժանաւորութեան խնդիր յարուցուելու, առանց «վիճակով դադարման» ազդեցութեան տակ ինչալու՝ ց'կեանս երեսփոխաններ մնալու առանձնաշնորհեալներ են. բաւ է որ ազէկ սողան և լաւ քըծնին . . . Ասիկայ օրէնք չէ ուրեմն : Կղերին այս մեղադրանքը գիրքն է որ մեր շնորհունակ Պատարարին նորանոր հրահանգներ հանել կուտայ և մեր Վսեմ. Բաշային ժառանգական կինցադադիրութիւնն է որ համակերպելու կը թելադրէ զինքը : Ալ երկարելու հարկ չ'կայ մեր ըսել ուզածը հասկցնել կարենալու համար . . .

Մենք մեր համալսումները պարզել շնանցինք անցեալ թիւերով : Չէինք կրնար երեւակայել թէ Բաշային իրաւամբ արուած արժանիք մը - օրինասիրութիւնը - ուրիշներու վիշտ ալ կը պատճառէ եղեր : Այս աստիճան ընկերայնորէն ներքի չենք գտներ գոնէ մենք :

Մեր եկեղեցական և աշխարհական օրէնքներուն հանդէպ մեր ժողովրդին մեռելային անտարբերութիւնը դեռ շատ բաներ ընել պիտի տայ . . . լաւ է որ ուրիշ առիթներով ալ ասոնցմով զբաղինք : ՄԵՆԻԿ

Թ Ե Ր Է Ք Ե Ն Ե Ր

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
Ա.ՉԳ.ԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ
Գահիրէ 11)24 Ապրիլ 1908
Թիւ 526

Առաջնորդարանս Ազգ. Գաւ. Վարչութեան Պատ. Բաղաքական ժողովոյ որոշման համաձայն՝ կը յայտարարէ թէ անոնք, որ պահանջ ունին ի Բաղաքիս հանդուցեալ Կեսարացի ծխալաճառ Բարսեղ Նազգաչճեանէ, պէտք է ներկայանան Առաջնորդարանս, Տիրաւորակերտցի կողմալաճառ հանգ. Յովսէփ Պետրոսեանէ պահանջ ունեցողները պէտք է զիմեն այրիին՝ Տիկին Թուսայ Պետրոսեանի, անոր խանութը ի Մուսկի, իսկ Կ. Պուսեցի հանգ. ոսկերիչ Խոսրով Մըկըրտիանէ պահանջ ունեցողները հարկ է որ զիմեն հանդուցելոյն միակ ժառանգորդին ներկայացուցին Տիար Եղիա Կիւմիւշճեանի, որ անցողաբար ի Գահիրէ կը գտնուի այժմ և որու գործատեղին է ի Կ. Պուլիս մեծ շուկան :

Այս երեք թէքէքներու համար զիմումները պէտք է ըլլան գրաւորապէս և ընկերակցեալ վաւերական թուղթերու և թուականէս 31 օրուան մէջ, եթէ պահանջատէրն Եգիպտոս կը գտնուի, և 61

օրուան մէջ՝ եթէ Եգիպտոսէն դուրս է : Անհետեանք պիտի մնան այն զիմումները որ այս պայմանաժամէն ետքը տեղի կ'ունենան : 1—3

Առաջնորդ Եգիպտոսի Հայոց ՄԿՐՏԻՉ Ե. ՎՐԿ. ԱՂԱԽՆՈՒՆԻ

Մ. Խ. — Սոյն թէքէքներու յայտարարութիւնը պարունակող երեք թիւերէն, թէքէքներու հետ նիւթապէս յարաբերութիւն ունեցողները կրնան թիւ մը ձրի ստանալ իրենց խնդրոյն իբր սողիւման, որովհետև սոյն յայտարարութիւնները վճարեալ են Պատ. Բաղաք. Ժողովոյ 22 Ապրիլ 901 ի նիստին մէջ եղած որոշման համաձայն :

ԹԻՓԵՐՈՒ ԵՐԱՆԳԱՊՆԱԿԷՆ

Մ Ի Հ Ր Ա Ն Ը

Գարնանային էն բացառիկ գեղեցկութիւններով օժտուած օրուան մը հիւանալի մայրամուտը կը տարածմեր բոցացայտ, հեռուն՝ արեւմուտքի հորիզոնին վրայ : Կանաչաւոր՝ ոսկեծիլ ցոլերու շնչակի լուսացնցողով, որը՝ մինչև հանդիպակոց բարձրաբարձ տուներու լուսամուտները, եւ շատ հեռուններունը նոյն իսկ կը վառէր՝ հրաշքի անդրաշուքումներով հրկիզումի խառնուրդ պատրանքին մասնակցով, Ու այսպէս աստիճանաբար արեւին բոցազունոր, աննկատ թաւալումի զնացքովը, կը մերձուէր՝ կանանչունակ դաշտանկար մը եզերող իրտաշար բըլբակներու խորը. զանոնք անհունին յատկութեան վրայ որոշազմելով լուսամտիով՝ ճառագայթարձակ բրգածայրերով :

Մեծ պահոց եօթեակ շարժմաշարքին վերջաւորութեան մօտ, որ սօնական մեծ օրերու սրբաբոյր բուրումը կը հեռանչուի, անասման ոգեւորութիւն մը կար այդ իրիկուն, դուռներու շէմքին վրայ կամ՝ պատուհաններու կից, Պօլսոյ շրջակայքի գիւղերէն, Մ. . . զիւրի բնակիչներու զբոսիական ծանօթ՝ որոշ շրջանի մը մտերմութեան մէջ :

Փողոցին ամբողջ երկայնութեանը վրայ, անօրինակ եռուզեռ մը զոյացուած էր կիներու և պղտիկներու որոնց զոյնզոյն կերպասաւորումները իրենց գիւղական պարզութեան մէջ, կը յիշեցնէր Մայիսեան դաշտանկարի մը նորաթիթ ծաղիկներու այլազան ցուցադրութիւնը, իրենց բնական վճիտ գեղեցկութեամբը ցայտուն :

Չմոռուան՝ միօրինակ եւ ճանճրացուցիչ սեւողութեանը բոլոր միջոցին զրիթէ՛ բարեխառն փափաքելի արեւշողով մը օժտուած առաջին օրն էր՝ թերեւ՝ նախադուր ամառուան՝ այդ օրը սրը՝ այնքան ինքնածին զուարթութիւն ստեղծած էր գիւղին բնակիչներուն, և որոնք հիմայ մինչև երկնամուտը անյայտ արամազութիւններով կը յամատէին, ըմբռնելէ՛ այդ օրուան հիանալի վերջաւորութիւնը իսկ, բոլորովին սկեպտիկ գիւղացիական փորձառութեամբ, եղանակին վաղուան անայլալ յաջորդութեանն : Եւ այսպէս, բնութեան հեշտօրօր տպաւորութեան տակ, անվերջ խօսքերուտուր մը ծայրուած էր. թրքիչներու բարձրագոյն այլանդակութեամբ : Ոմանք անցնող ձմեռուան արհաւիրքը, իրենց զբացողութեանց չափովը կը բացատրէին իրարու միւսներ՝ ձմեռուան մէջ անցուցած հաճելի ժամերը, շաղկապի բացատրութիւններով և աւելորդաբարձութիւններով կը համեմէին, ուրիշներ մերձաւոր սօնական օրերը և՛ ապագայ

ամառը կը թեւածէին, միամիտ հպարտութեամբ : Ու պղտիկներ ալ իրենց սիրուածներու մօտիկը՝ անոնց կողքին զպրօցական գրասեղաններէ հեւ ի հեւ ազատած, իսկ ու խօլ խաղերով փողոցը կ'աղմկէին անպարտում, մայրիկներու հրեմնի կշտամբանքին եմթարկուելով, յաճախ ալ՝ սաստուելով սիրուն ապստաններու մեղմիկ հպանցքէն լաց ու կոծի անզատարափ վայտասինով մը լեցունելով ամբողջ փողոցին մթնոլորտը :

Իրիկնամուտը կենսունակող, հոգեպարտի՛ զեփուին անհասար փրչումներու վէպվաւումին համթաց, զիւրին մեծաւոր թաղերուն խորէն, հուժկու ելեւէջներով յատկաբարձ Միհրանի բարձրաթիւ ձայնին խաղերը մինչև հոս կը հասնէր հովածուփ : Անոր սպասումովը համակուած կիներ ու աղջիկներ մասնաւոր արարանքով մը՝ ամէն իրիկուայ վճարող բաժինը ունենալու նախապարաստակամութեամբ՝ իրենց սունկերը կը փութային, հեաապնդուած պղտիկներու բնազդային խուճապէն :

Թարմածել՝ թաւշանման կանանչ մարգերուն տափարակութեանը վրայէն Միհրանի թփիկին երկունս սկաւառուկը՝ արհեստական վարժութեամբ զըլխուն վրայ կեցուցած, իր դասակարգին յատուկ, ծիքծիքտ քալուածքովը երեւաց :

Ճեփ ճերմակ անձեռնօղը, որ իր հակայ կողմուածքին կէտը կը պարփակէր զենթակածե, մասնաւոր ինամբով պրկուած, կիջներ մինչև իր ոտքերը բոլորովին աննշմար ձգելով իր հաստակերտ տափաւը, որուն՝ սեղմ վերջաւորութիւնները միայն իր այլաճակ ստանամաններուն մէջ՝ որոշապէս կտրատայտուէր, սննեթիթ պատկերացումով : Ու կը յառաջանար Միհրան, նորըստաց, բայց շատ ընթացիկ խաղի մը եղանակաւորումները յեղյոյզելու բռնազբօսիկ շանքերովը, հաղիւ նկատելով մտեցած ըլլալը փողոցին, ուր իր ամեն իրիկուայ յաճախորդներուն ամբխային զուարթութիւնը բարձրագոյն կը թնթացէր միջավայրը : Եւ Միհրան յանկարծակեան երեւոյթի մը վարկենական տպաւորութեանէն սթափած, այս անգամ աւելի ոգեւորուած ձայնով մը կանչեց. թփիկ՛, Մարիամ տուտուինն է՛ :

Մարիամ տուտուն գիւղին մէջ յայտնապէս ճանչցուած, տարեց կիներէն մէկն էր : Մեծէն մինչև պղտիկը, մասնաւոր ակնածանքով կը վերաբերուէին անոր հանդէպ, իր կենցաղավարութիւնը՝ օրինակելի ըլլալու աստիճան բարեմասնութիւններով օժտուած, թեւաբարկան և զատարար կիջ էին, աւելի երիտասարդներու բարոյական ազնուացումին համար : Սպասեցական պղտիկին աւանդութիւններու ճշմարիտ հետեւող աւանդապահ մը մինչև իր կեանքի խորութեանը մէջ անոնցմով սնուած ու ապրած, անոնց սրբազան բարեպաշտութեանը մէջ լուծուած՝ մաշուած էր : Իր մտքասիրութիւնը սպացուցանող հանգամանքները կը բացայայտուէր՝ աղքատիկ բայց կոկիկ ապրելու երեւոյթներէն : Սովորական լուացքի ապրուստէն զատ բացառաբար՝ մեծ պահոց եօթնեակը քանի մը տարիներէ ի վեր թփիկ պատարաստելով կանցուէր, իր զակին Միհրանին օժանդակութեամբը, որ՝ ծախելու պարտականութեանը ստանձնած իր ամենօրեայ զբաղումներէն զատ իրիկունները մի քանի ժամ ալ անոր յատկացնելով :

Թփարարձ սկաւառակը ճերմակ անձեռնօղներու ձիւնաթոյր պարուրանքին մէջ, մեղմօրէն՝ Միհրանի հուժկու բազուկներէն զետինը կը զետեղուէր ծայրայեղ զգուշորութեամբ :

ամեն անգամ որ՝ զինքը նոր կանչող մը կ'ըլլար : Անոր կողմակի բաց, ուսածքէն՝ հատիկ հատիկ, կորնթարթ ծրարիկները տողանցուած կը նկատուէին, ու թիթիւ, շղարչահեւ գոլորչի մը դեռ կը վերամբառնար անոր ծալքի բացուածքէն զանդաղ արտաշնչութեամբ, խառնուած համեմի բարկ ու զգլթիչ անուշահոտութեանն, որը՝ մինչև վեր ոնգունդները կը բարձրանար ճաշակելու անզուսպ տրամադրութիւն մը առիթով : Ու այսպէս Միհրան անխոնջ ու անձանձիր, ճարպիկօրէն ուսուցանելով զիկ զակ փողոցը կը գծէր անդապրում, էութիւնը գերակշռող իր շտեմբուն ծուլօրէն միշտ հպատակած իր յաճախորդներուն ուղղած փաղաքշտկան բառերու շարքերէն ամենաշտտկափակափածը՝ Մարիկս - քուրիկս - ի յաջորդական արտաբերութիւններովը կը կարճեր անոնց ինքնասիրութիւնը փայտայել, զանոնք՝ շփացածի տրամադրութեան մղելով :

Մթատուերը, յամբաշարժ վայրէջքով, լուին ու հեղասահ, քառասային անորոշութեան մը ուրուպատկերովը սարսաղազեցիկ տիրած էր, արդէն՝ հեռուի հիասքանչ բնական գեղեցկութիւններու խանդաղատանքէն, եւ՛ կը սպասնար լուծել անթափանցել ամէն ինչ որ, տարած էր այդ օրուան գեղածիտող արքութիւնովը : Չօվհասարող զեփուին քաղցրութիւնը տարապայման հով սաստկութեանը փոխուած խիղախ յորձանքներով կ'աւեր փողոցին ամայութիւնը, որու բնակիչները՝ արդէն շատնցուածէ, արգելափակ պատուհաններու հետեւ կ՛իկուած, լամբարին համեստ լոյսին տակ, դուրսի յանկարծակեան, օրին աւարչակուած կը զրտէին :

Նշանակի քմահաճոյքէն պոռթկացած, բնութեան այս վայրագ համերգը : փոթորիկ անաբեկումներով կոտնար դուրսը հիմայ, որի շաղոյ բաղխուներու ուժգնութեան մէջէն, ատեն ատեն դեռ կը լսուէր թփիկին, խուլ յանկերգին բեկումները, նաւարկութեան մը պերմարդկային ճիգերուն մէջ կողկողազին ու խիղախ, ազատամարտի պոռչուածներու հանգոյն : ՆԸԿԱՐ

ՉԵԿՈՅՑ

Կովկասեան գերասանական Խուճրի անգամ Պ. Մ. Բրուտոս հետեւեալ գրութիւնը կը զրկէ մեզ ի հրատարակութիւն, պատասխանելու համար Տ. Տ. Ս. Փափաղեանի, Տոքթ. Նեվրուզի և Սեպուշ Պէյ թիւրապեանի «Արձանագրութեան» մէկ օրինակին որ այս էջերուն մէջ հրատարակուեցաւ :

Խմբագրութիւնս Տ. Բրուտոսի քով տեսաւ այն գրաւոր յայտարարութիւնը որ Տ. Համբարձում Պէրպէրեան ստորագրած է և հաշուական խնդիրներու մէջ Պ. Բրուտոսը անպարտ կը թողու ո՛ր և է ամբաստանութեանէ :

«Արշալոյս» ի Խմբագրութիւնը «իրաւունքը զօրաւորինն է . . . » բանաձևը իր խեղաթիւրեալ իմաստովը չ'ընդունիր, որովհետև կը հաւատայ թէ՛ օրէնքը և ճշմարտութիւնը աւելի շատ անգամ յայթափանակ և իրապէս յայրաւանակ կը տանին, քան օրինականները ու ևս սաղիմականները, որչափ ալ երևուած թապէս զօրաւոր համարուին ասոնք : Ուրեմն իրաւուքը «իրաւունքինն է » և ո՛չ թէ՛ զօրաւորին, ի բաց առեալ իրաւունքին դէմ՝ եղած զեղծութեան :

ները՝ որոնք անբարոյականութիւն կը համարուին :

Պ. Բրուտոս իբրևուրքներ ունի ինչպէս յայտնի կը սենտուի, բայց խնդիրը այն է որ իրեն հակառակորդը գերասանուհի Տիկին Սիրանոյ՝ բարոյականին կարևորութիւն ընծայող մէկը ըլլալու չէ... և ասիկայ բաւական է որ Պ. Բրուտոս քիչ ժամանակի մէջ շատ թուով և « զօրաւոր . . . » հակառակորդներ ունենայ իրեն դէմ : Բայց վստահ թող ըլլայ թէ՛ իր պարտութեանը մէջ է բուն իսկ յայտնակը . . . : ԽՄԲ .

ՅԱՆՈՒՆ ԱՐԳԱՐՈՒԹԵԱՆ

Յարգելի Խմբագրութիւն « Արշալոյս » օգտաշատ լրագրի ի Գաղաքիս

Խնդրում եմ տեղ ալ մի քանի տողերիս յանուն արդարութեան :

Զարմանօք կարդացի « Արշալոյս » ի 487 համարում « Արձանագրութիւն » վերնագրով վերին աստիճանի վրդովեցուցիչ մի գրութիւն՝ որը շօշափում էր իմ թանկագին պատիւը :

Թատերական ժամանակակեր Մասնախմբի երեք անդամները զրպարտող գրութեան բովանդակութիւնը սաստիկ զայրոյթ պատճառեց ինձ, եւ այդ զբոլորութեան է որ թոյլ կուտամ ինձ պատասխանել ո՛ր եւ է դատաւարութեանէ առաջ :

Դուք՝ արձանագրութիւն ստորագրող պարոնայք. Փետրուարի սկզբը ներքում անտանելի բնաւորութեամբ յայտնի Տիկին Սիրանոյ՝ յայտնած անտեղի կասկածներին ուղղորդութիւն դարձնելով՝ կատարեցիք նրա ցանկութիւնը : Նախ քան Պ. Համբարձում Պէրպէրեանի՝ Ձեզմէ երկուքը ուրիշ անդամի մը հետ միասին դռնեցիք մի քանի ժամ եւ զուրս բերիք երեւակայական 2,700 դրոյ. գումարի բաց մը, որի պատասխանատուութեան մասին մեղադրում էր նաեւ ընկեր Պ. Յ. Ըստեփանեանը : Մենք երկուքով պնդում էինք Ձեր խօսքը սխալի մասին, սակայն զուրք էլ Ձեր անխաղաղութեան մասին պնդելուց յետոյ՝ հրաւիրեցիք հըմուտ հաշուապահ Պ. Հ. Պէրպէրեանին եւ այս վերջինի ներկայութիւնը մեծ ուրախութիւն պատճառեց իմ սրտին, որովհետեւ համոզուած էի որ խնդիրը պիտի պարզուի եւ արդարութիւնը պիտի փայլի մեր վրայ :

Պ. Հ. Պէրպէրեանը երկու գիշեր մինչեւ ժամը 2ը ինձ հետ պարտպեց եւ կազմած ընդհանուր հաշիւից երեւաց 515 դրոյ. ի գումարը ինձ մօտ՝ իսկ 5000 ից աւելի գումարի պատասխանատուութիւնը (բաց ի 2 նպաստներէ) Մասնախմբի անդամներին մօտ, ինչ ինչպէս կարգադրեցին իրենց խնամոց յանձնուած հաշիւները՝ եւ բոլորովին անտեղեկ եմ իմբի Գանձապահ եւ հաշուապահի պատասխանատուն լինելով հանդերձ : Թողնե՞ք իմ արգար պահանջները հարցը ապագայի, կանգ սուսնեք գլխաւոր հարցի վերայ, որին համար մեղադրում եմ իբր պարտական Սիրանոյն :

Պ. Պէրպէրեանին յայտնած էի վերոյիշեալ գումարից խմբի անդամներին ի հաշիւ վճարած եւ թատրոնական ծախքերի մասին 413 դրոյ. ի գումար մը, եւ այս ծախքի կատարումը հաստատուած էր խմբի անդամներէ : Բացի դրանից 500 դրոյ. վճարուած գումարի ստացականը մոռացումը հաշիւի անցկացրած չէր, որի մասին Պէրպէրեանի գրաւոր վկայութեամբ քոյս է : Հետեւաբար Մասնախումբի երեք անդամները պէտք էր որ բարեխիղճ լինէին իստ-

տովանելու թէ՛ եւ ո՛չ մի պարտք չունենալէս յետոյ, պահանջող ալ էի Պ. Հ. Պէրպէրեանի կազմած հաշիւներին համաձայն :

Ուստի Պ. Տ. քթ. նէվրոզ. եւ փաստաբան Տիար Ս. Փափազեան. բարեհաճեցէք լուրջ վերաբերուիլ ինձ հանդէպ եւ հրապարակաւ ետ վերցնել « Եպիտեւի » եւ այլ Ձեզի պատիւ չ'ըբրող ծանր խօսքերը, որ իմ հասցէիս ուղղած էք : Հակառակ դէպքում ստիպուած պիտի լինիմ օրէնքի առկա մեղացիներ Ձեր բոլոր ազեղ արարումներ մասնատուութիւնները, զօրաւոր փաստերով եւ ո՛չ թէ լսի խօսքերով, ինչպէս ընել փորձած էք զուրք :

Եւ երկուս տարիներ ընթացքում, թատրոնական ասպարէզում սրբութեամբ պահպանած պատիւս թոյլ չեմ տայ երբէք կամայականութիւններ զո՛ր տալ :

Մի քանի խօսք Սեպուհ Պէյ թիւրապետացիին :

Շատ տարօրինակ թուեց ինձ զէմ եղած ամբաստանագրին մէջ Ձեր ստորագրութիւնը : Դուք ո՛չ մի անգամ մեր հաշիւներին մէջ ներկայ չէք եղել եւ հետեւաբար նրա մասին տեղեկութիւն չէիք կարող ունենալ, սակայն ինչի՞ վերագրել Պ. Պէրպէրեանի հաշուեքներու թիւնէն յետոյ Հարանի մէջ Ձեր առ իս ուղղած շնորհակարտութիւնները հաշիւներին ճշտութեան մասին, եւ միւս կողմէ՛ արձանագրութեան ներքեւ Ձեր ստորագրութիւնը :

Ուստի զարմանալի է որ փոխանակ միւս անդամին. որ հաշիւներին ներկայ էր, զուրք չէք մերժած նրանց առաջարկութիւնը եւ ստորագրած էք խաբէր համար :

Յարգանք
Կովկասեան Հայ Գերաստանական
Խմբի անդամ
Մ. ԲՐՈՒՏՈՍ

Ա.Զ.Գ.Ա.ՅԻՆ

Ե Ո Ր Ր Ր

ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ՊԱՏԻՒՄՐԱՐԱՆԻ ՄԷՋ

« Բիւզանդիոնի » մէջ կը կարդանք :

Խառն ժողովը սրոյած է աւմուսնական հրահանգի ըննութիւնն յանձնել Աշնան Տիրան էֆի, որ իբրեւ զեր Ատենապետ Վարչութեան, արգէն բաւական ծանրաբեռնուած է աշխատութեամբ, և ամեն շարժութեամբ զրկելու ուսումնասիրելու հարկադրուած է քաղաք. Ժողովոյ և Խառն ժողովոյ օրակարգին պատրաստութեան համար :

Այս ամուսնական հրահանգի խնդիրը վեր ի վերոյ ուսումնասիրութեամբ չի վերջանար. Բիւզանդիոն հրատարակեց մէկէ աւելի յօդուածներ, որոնք հրահանգին ուղղելի կողմերը կը մատնանշէին : Այդ առաջարկութեանց մէջ գործադրելի կէտեր կան, սակայն ամեն պատրագալի մէջ ամուսնական գործերը քննող և սրտող մարմին մը կայ այսօր պաշտօնի վրայ : Դատաստանական խորհուրդը, որուն կարծիքն ալ պէտք է ստանալ ո՛ր է ամուսնական կանոն և հրահանգ պատրաստելէ առաջ, սրտապէս գիտնալու համար թէ՛ ինչ կարգի գործեր են ընդհանրապէս խորհրդոյ նկատողութեան ներկայացուածներն և ինչ կարգադրութեան կը յան-

գին ու փորձառութիւնն ինչ ցոյց կուտայ անոր լուծման մասին : Այս նկատումներով դատաստանական խորհրդոյ կարծիքն ալ առնելէ յետոյ, եկեղեցականներէ և աշխարհականներէ կազմուած խառն Յանձնաժողովի մը գործն է այդպիսի կանոնի մը քննութիւնը քան թէ միայն մէկ ժողովականի, որուն օրէնսգիտական և Վարչական հմտութիւնն որքան ալ օգնեն, ժամանակն անբաւական է վերջնական և մը տալու կանոնին : Այս առաջարկը կը կարծենք թէ նկատողութեան կառուուի Վարչութեան կողմէ, ընտանեկան և ընկերական այսպիսի ընդհանուր խնդիր մը աւելի խնամով քննելու և աւելի հաստատուն ելք մը տալու համար :

ԿԱՌՈՂԻԿՈՍԻ ԽՆԴԻՐ

Գիտեն անշուշտ մեր ազգայիններէն շատեր, թէ Ռուսահայերու մէջ այնչափ լայն մտածողներ եղած են, որ մինչեւ իսկ կաթողիկոսի մը գոյսութիւնը բոլորովին անպետ եւ փնասակար կը նկատեն եւ կը փափաքին որ առաջիկայ կաթողիկոսական ընտրութիւնը չի կատարուի :

Տիկիսի մէջ սակայն՝ Մարտ 23 ին տեղի ունեցած գումարումի մը մէջ, Ռուսահայ գրագէտ-Մասնագիր Պ. Լէօ ընդարձակ առեւտրաթուղթերով մը բացատրած է կաթողիկոսի գոյսութեան առաւելութիւնները եւ քաղաքական նշանակութիւնը, եւ որոտնդոտ ծափահարութեանց մէջ վերջացուցած է իր ճառը, որուն հետեւած է Յանձնաժողովի մը կազմութիւնը՝ ուսումնասիրելու համար ժողովրդին կարծիքները եւ պահանջները եւ կաթողիկոսական թիկնածուներու արժանաւորութիւնը եւ պէտք եղած յատկութիւնները :

Այդ յանձնաժողովին անգամ ընտրուած են « Մշակ » ի երկու խմբագիրները Պ. Պ. Գալանթար եւ Հ. Առաքելեան, ասոնցմէ զատ՝ Ս. Յարութիւնեան, Ա. Բարսիլեան, Բ. Բարսիլեան, Ա. Անարոնեան, Ա. Նեպոստոման, Մ. Նեպոստոման եւ Ա. Նազարեթեանց, Ժողովրդեան կարծիքը հարցնելու եւ ուսումնասիրելու համար կազմուած սոյն Յանձնաժողովը կարծէ որ « Արշալոյս » ի Խմբագրութեան ալ զինուած ընէ, մէկ երկու կաթողիկոսական թիկնածուներու մասին իւր գիտածները ըսելու համար, մասնաւոր նամակաւ եւ ո՛չ հրապարակաւ :

ՍԵՂԱՆՍԻՈՐԱԿԱՆ ՏՈՒՆ

— 0 —

Մուսի փողոց բիւ 6, Սիկիլի մասնա-

ճիւղին քով, Ժիւսքեի դիւան

Կը գնէ եւ կը ծախէ հրապարակի վրայ շրջաբերող բոլոր կարեւոր արժեթղթերը, մասնաւորաբար Գրեթի Ֆօնսիէի հին եւ նոր, Բուսիլի երկաթուղեաց եւ Բանամայի ֆրանսական վաւերացումը արժեթղթերը, որոնց սկզբնէն ց'այսօր շահող թիւերուն ցուցակներն ալ ունի :

Արժեթղթերու արդի խիստ նպաստաւոր գններն կրնան օգտուիլ Եզրկատարակ մեր ազգայինները մեղի գիմնելով :

Մասնավճարներով - 25, 50, 100 - կարելի է արժեթղթերու տիրանալ, եւ մատչելի պայմաններով՝ աւանդի փոխարէն՝ փոխառութիւններ կ'ընել :

Սեղանաւորական ամեն տեսակ գործառնութեանց, եւ առեւտրական

ամեն կարգի Պոստեր զեզելու պատրաստակամութիւն :

Սեղանաւորական եւ Պորսայի գործառնութիւններ եւ ա'յս կարգի գործերու վերաբերեալ գաւառներէն եղած յանձնարարութիւններ փութով կը կատարուին :

12-50
ԱՐՄԵՆԱԿ ԹԱՇՃԱՆԱ

Ծ Ա Ս Ո Ւ Գ Ի Ր Կ Ե Ր

— 0 —

« Արշալոյս » ի տպարանին մէջ, Շէրիֆ բաշայի պարտէզին դիմաց՝ կը վաճառուին Պ. Արշակ Զօպանեանի հետեւեալ հեղինակութիւնները :

- 1. Գիթուածներ Գին 5 Ֆր.
- 2. Մկրտիչ Պէշիկթաշիանի կեանքն ու գործը Գին 5 Ֆր.

Ուսուցիչներու և մտաւորականներու համար մասնաւոր զեղք :

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

4. Պոլիս 20 Ապրիլ. - Բ. գուռը Իսալիոյ պահանջման դէմ կատարել թէ՛ օտար տէրութեանց այն նամակատունները որոնք Թուրքիոյ գանադան կեդրոններուն մէջ գոյութիւն ունին, ո՛չ թէ պաշտօնապէս արտօնուած են, այլ նկատողութեան վրայած եւ թոյլատրուած են : Ուրեմն Իսալիա չի կըրնար Թուրքիոյ բարի արամագրութիւններէն օգտուած ուրիշ տէրութեանց կարգը դատուիլ :

Հոտմ 20 Ապրիլ. - Թուրքիոյ Դեսպանը Պ. Թիթօնիի այցելելով նամակատանց մասին Թուրքիոյ հինգ քաղաքներուն մէջ, ուր միւս տէրութիւնները ունին՝ Իսալիան նամակատուններ հաստատուելու առաջարկին ընդունելութիւնը ծանոյց : Պ. Թիթօնի իր գոհունակութիւնը յայտնեց Դեսպանին տուած պատասխաններուն համար եւ նաւային ցոյցի մը կատարուելուն պէտքը անդալի ըլլալը ծանոյց :

Ս. Բէթէրպպուրկ 20 Ապրիլ. - Պարսիկ հրոսակները հետապնդելու համար զրկուած ջոկատը Շիրին մտած է : Սերք սպաննուած եւ 10 վերաորտալներ կան : Աւազակները հիմայ Շիրինի կըսպանան, ուր գողագներու նոր ջոկատ մը պիտի զրկուի :

Սերպիա 20 Ապրիլ. - Սերպիա կը մերժէ ընդունել նոր գաղթականները, որոնք Ալպանիացիներու թշնամանքներէն հալածական են : Թուրքիա վերջերս այս գծադրներէն 200 հոգի ետ գործուցած է՝ որոնք պաշտպանութիւն կը խնդրէին :

Ս. Բէթրէսպպուրկ 22 Ապրիլ. - Կովկասի Փոսթաքան երկու զօրաբաժիններու հրաման տուած է Պարսկական սահմանագրուելու երթալու :

Ս. Բէթէրպպուրկ 23 Ապրիլ. - Զօրավար Լինիէվիչ մեռաւ (Ռուսո-ճարտական պատերազմի հերոսներէն մէկըն է զօրաւար Լինիէվիչ) :

Ս. Բէթէրպպուրկ 24 Ապրիլ. - Ռուսիայ Գլխիտի նաւակերտարանին Տրէսնօթէն աւելի մեծ հինգ զրահաւորներ ապսպրեց :

Հոտմ 24 Ապրիլ. - Բոլոր երկրին մէջ ձիւն տեղացած է : Գորթու 25 Ապրիլ. - Գերմանիոյ կայսրը կարծիք Արծուի պատուանշանը շնորհեց Պ. Թէթօքիսի : Աւստրիական երեք պատերազմաւեր հոս հասան :

Գորթու 26 Ապրիլ. - Ժօրթ թագաւորը հացկերոյթ մը տուաւ Կայսեր : Անգլիական եւ Աւստրիական զրահաւորներու հրամանատարները ներկայ եղաւ հացկերոյթին :

Մթիւպ 27 Ապրիլ. - Թուրքիոյ Սերպիական գաւառութիւն մը երեւան հանցին, որը կազմուած էր Սանձաքի ստորաբաժանումները արգիլելու համար :

Ձէս 28 Ապրիլ. - Մոլեանդ հրոսակները ֆրանսական նամակատունները՝ ինչպէս նաեւ Գերմանական եւ Անգլիական փոստարկները քար ու քանդ ըրին : Իշխանութիւնները ցաւ յայտնեցին :

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԾԻԱԽՈՏԻ
ԵՒ ԸՆՏԻՐ ՍԻՎԱՐԵՅՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

ՎԱԿԶ - ԷԼ - ՊՐԲԷ ՓՂՂՈՑ ԷՕՁՊԷԲԻՅԷ



ՄԵՓԱՎԱՆԱՏԵՐԲ

Ն. ԵՒ Ա. ՀԱՃԻԹԵԱՆ ԵՂԲԱՐԲ

ՍԻՏԿԱՆԻՇԸ ԻՐԵՆՅ ՎԵՐԱԳՈՂՅԵԱԼ Է .

Արևելեան ընտիր ծխախոտներէ պատրաստուած թարմ սիկարէթներ անմրցելի աժան գներով ունենալու կամ վայելելու համար, ամէն անգամ
և ամէն տեղերէ աւելի՝ պէտք է նախընտրել մեր վաճառատունը .

Առաջնակարգ տեսակներէ Եւրոպական սիկարուներու լաւագոյն զանազանութիւնները գտնելու համար՝ հարկ չ'կայ հոս ու հոն ժամաւաճառ ըլլալու . բաւական է անգամ մը անպատճառ այցելել մեր վաճառատեղին .

Պարսկական ամենաընտիր թէմպէքիի այլ և այլ տեսակները բայի մեր վաճառատունէն, ուրիշ տեղերէ դնելը պարզապէս սխալի է .

Մեր վաճառատունը վերջապէս, զինքնու աժանութեամբ, տեսակներու բազմազանութեամբ ու ճոխութեամբ և այլ ամէն տեսակէտներով, և մասնաւոր գործածել որոշած ապրանքներուն թարմութեամբ անմրցելի է, որուն անժխտելի ապացոյցներէն մին ալ զարգացած եւրոպացիներէ օրրատու օրէ մեծ քանակութեամբ և ստուար թուով եղած յանձնարարութիւններն են .

Ն. ԵՒ Ա. ՀԱՃԻԹԵԱՆ ԵՂԲԱՐԲ

ՆԱՄԱԿ ԱՂԷՔՍԱՆԴՐԻՍՅԷՆ

Պատահական թղթակցէ մը՝ որ « Տեսնուինք » կ'ստորագրէ, ստացած ենք զուրթիւն մը, որուն մէկ քանի մասերը միայն կը հրատարակենք մոլծէութիւններ չօչափած ըլլալուն համար, մնացեալ մասերուն վրայ խմբագրութիւնը արդէն իր քննութիւններուն ձեռնարկած է .

ԽՄԲ .

Աղբ. 22 Ապրիլ 1908

Պատ. Խմբագրութիւն « Արշալոյս » Ի Գահիրէ

« Առաջերի » Ի վերջին 511 թիւին մէջ Պ. Վահան Թէքէեան « Դժբաղդ Աղէքսանդրիայ » արտոգրուած յօդուածով մը կուգայ ամբողջ պատասխանատուութիւնը և յանցանքը նետել « Աղէքսանդրիայ հայ ժողովուրդին » վերայ՝ որ, թող տուաւ որ՝ վերջին անգամ հազիւ այդ թիւին մէկ քառորդը գրիթէ 175 հոգին՝ ընտրութեանց մասնակցելու շնորհն ստանան » .

Ի՞նչ մը վարն ալ կ'աւելցնէ « ... - Ու ժողովուրդն ալ մեղս յազիր մը կուտայ Նորին Վսեմութեան, ինչպէս նաև և հանդիսաւոր արարողութեամբ Զատկին օրը քարը անգը կը դնէ » .

Պ. Վահան Թէքէեան շատ մտէն ծանօթ ըլլալով Աղէքսանդրիայ Ազգ. գործերուն, ինչպէս նաև Սահմանադրութիւնը և զորք զնկու համար կազմուած Յանձնախումբերու, Մասնախումբերու անգամոց դիտումներուն, ինչպէս կը համարձակի պատասխանատու բռնել ժողովուրդ մը՝ որ ամեն անգամ ոտքի ելած և լիովին կատարած է իւր պարտականութիւնները .

Ժողովուրդի իբրև անհատ և ինչձի հետ ուրիշներ ալ՝ իրաւունք ունինք յայտնելու որ Աղէքսանդրիայ մէջ Սահմանադրութիւնը իրականացնելու և խղճամբ մարտերէ օրինաւոր ազգային իշխանութիւն մը կազմուելու ցանկութիւնը ունեցող հայ ժողովուրդին ամբողջ աշխատութիւնները, « ոտք ելլելները », անոր աշակցութիւնը՝ իր վարիչներուն վրայ ունեցած « վստահութիւնները » ամենքն ալ չարաչար գործածուեցան, որով ժողովուրդը իրաւունք ունեցաւ « չեղօք » գիրք մը բռնել .

Թողով որ՝ ժողովուրդին ազնիւ տրամադրութիւնները մասնաւոր հաշիւներու և իրարու դէմ սուղացած անձնական ատելութիւններու համար ծառայե-

ցըողները իրենց խաղաղութիւններուն հաշիւները վերջացնեն, ուղածնին ընտրող համարին, չուզածնին ընտրելաց ցանկէն դուրս ձգեն և փոխանակ ժողովուրդին կրթնելու իրենց հաշիւներուն վրայ կրթնելով բարձրացնեն դեռակ Սահմանադրութիւնը, որուն մէջ ժողովուրդը գործ չունի անշուշտ .

Ժողովուրդը ի՞նչք պահանջեց, որ ընտրութեան չի մասնակցեցնեն զինքը .

« Ժողովուրդին շահերը » պոռացողները ուր էին այն ժամանակ երբ Առաջնորդ Աղաւունքի իր դերը կը խաղար և ամբողջ ժողովուրդի մը արդար իրաւունքները ոտքի ապկ կ'առնէր, զրկելով զայն ընտրելու իրաւունքէն .

Տակաւին մեր խելացի դաւիթները յոյս ալ ունին որ Օրմանեան պատրիարքի և Աղաւունքի վարդապետի վաւերացումներով ամէն բան պիտի լ'ընենայ . . . սպասենք և յուսանք . . .

Վ. Թէքէեանի ակնարկած « պատասխանատուութիւնը » անաչտորէն պէտք է նետել մտքի մէջ իրենց հաշիւները կարգադրել ուղղ Պարսկանուն և անոնց չուրջի մարդոց վրայ .

Եզրակացնելու համար ըսենք որ՝ ժողովուրդը « հոգնիլ » չ'գիտեր արդարեւ . բայց « զղուիլ » գիտէ . . .

ՏԵՍՆՈՒՒՆԻՔ

ՆՊԱՐԱՎԱՃՍՈՒ

ՇԱՐԷ ՄՈՒՀԱՄԵՏ ԱԼԻ, ՊԱՊ-ԷԼ-ԽԱԼԲ

Շարէ Մուհամէտ Ալիի ամբողջ գրածին վրայ կող յապարավաճաններուն մէջ, մեր վաճառատեղին միակն է որ ապրանքներու թարմութեան և մաքրութեան շնորհիւ մնայուն գրեթէ մը բռնած է տարիներէ ի վեր .

Նպարեղէններու վերաբերեալ ամէն ինչ՝ փոքր թէ մեծ քանակութեամբ զնորներու համար, անթերի են սոյն վաճառատեղոյն մէջ .

Մեր յաճախորդները գոհ թողելու նպատակաւ՝ սպասելի ապրանքներու ընտրութեան և գնումին ատեն շատ խնամք և նոյն խի բծախնդրութիւն կրնենք . Ուրեմն նպարեղէնի վերաբերեալ ամէն ապրանք թարմ է և մաքուր միւր քով .

Կշիռը, որուն համար ուրիշ շատ տեղեր գանգատանաց պատճառ տուած է, մեր քով գոհունակութիւն միայն տուած է . վկայ մեր բազմաթիւ յաճախորդները, որոնք միշտ գոհ մնացած են .

Ձեր սուրին նպարեղէնի բոլոր պէտքերուն համար գրեմեքք ի Պապ-Էլ-Խալբ՝ մեր վաճառատեղին և չ'պիտի զղջաք .

16-41
ԿՈՐԱՊԵՏ ԳԱՍԱՐՃԵԱՆ

ՄԵԾ ՍՐՃԱՐԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ
GRAND CAFE ARMENIEN (Le Caire)
Սոյն Մոնարանը որ Միսան էլ Խաղնեսարի օդատուն հրապարակի
կիւն վրայ կը գտնուի, իր մաքրութեամբ և ընդարձակութեամբ ճաշակիւն
մէջ յարմարագոյններէն միւս է հաճախարէ ժամանակ անցնելու .
Մոնարանը յաճախորդներ վերոյիշեալ առաւելորդներէն զատ
հոն պիտի գտնուի նաև շաւուր ընկերներ, ճոր և ընկեր պիւրատու
ներ և անթերի ապաստարանք .
ՍԵՓԱՎԱՆԱՏԵՐԲ
ՄԻՍԱԲ ՍԱՐԳԻՍԵԱՆ

ՄԻՇԻՍԱՆ ԿԻՐՃԵԱՆ
ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԴԵՐՁՈՎ
Խալիկ փողոց թիւ 12 Էօլեք հփեն-
սիի վաճառասան էսէլի կողմը .
Կը ծանուցանէ արգոյ ազգայնոց
թէ՛ իր վաճառատան մէջ ամեն տեսակ
կերպաներ կը գտնուին, ամենէն լաւագոյն,
զիմացուած և ճաշակաւոր ըզրկեաները
պատրաստուելու համար .
Անկարելի է որ մէկը իրեն զ'մէ
և գոհունակութիւն չ'յայտնէ՝ ձեւաւոր
զգեստի մը տիրացած ըլլալը փորձով
հաստատելով .
Արևոտին մէջ իր ունեցած հմտութիւնը
ամէն տարակոյտէ վեր կը մնայ, երբ
ըսուի միայն թէ՛ կրկար տարիներ
պաշտօն ունեցած է Պոսոյ նշանաւոր
Ֆրանսացի Բալման տանը մէջ .
Իր սակերը զիւրաժատչելի են .
այցելեցէք և գու՛ք ալ գոհ պիտի մնաք .
14-50

ԼՈՅՍ ՏԵՍՈՒ
ՍՈՒԼԹԱՆ
ԱՊՏԻԿԱԿԱՆ ԶԱՄԻՆ ԻՆՉՊԷՍ ՄԵՆԱԿ
ԺՈՂՈՎՈՐԻՆԵՆ ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆԸ ԹԻՒ 3
ԳՐԻՈՅԻԸ
ԳԻՆ ՄԷԿ ՖԵՐԱՆԲ
Դանիտէն կրնան դիմել ԱՐՇԱԼՈՅԻ
Տպարանը՝ և Արուստաններէն ՀԷ
դիմակիւն հետեւեալ հասցեով .
M. ARAM
Grand Café Arménien
Le Caire - Egypte

ՎԻՃԱՎԱՅԱՆՈՒԹԻՒՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ԶԻՆԱՆՇԱՆԻ
ՍԵՆՆԱԳՈՐԾ
ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ
ՄԵՏԱՔՈՎ ԲԱՆՈՒՄԾ
400 թիւէ յաղկացած
ԹԻՒՐ 5 ՂՐԵ . ՈՂՁ
Մեծ սրճարան Հայկականի մէջ
ի ցոյց դրուած սոյն անունան մե-
տաքոնայ ձեւադրածի վիճակահա-
նութիւնը՝ որուն անցեալ փետրուար
ամսոյ մէջ տեղի ունենալը ծանուց-
ուած էր, բայց ինչ ինչ պատճառ-
ներով յետաձգուած է . անոնք
որ սոյն չ'քննադ զարդ ունենալ կը
ցանկան, ժամ առաջ թող դիմեն
« Արշալոյս » ի տպարանը Տ . Իէորդ
Փափազեանի մնացեալ սակաւաթիւ
տոմսերէն գնելու համար, որմէ
անմիջապէս յետոյ տեղի պիտի ու-
նենայ վիճակահանութիւնը Հայկա-
կան սրճարանի մէջ կանխաւ ծա-
նուցուելով .

ՏՕՐՔ ԵՍՔԻՐ Լ. ՃԻԲՈՊԵԱՆ
ՇԱՐԱ ՆՈՒՊՈՐ ԲԱՇԱ . ԹԻՒ 20
Ամերիկայի համալսարաններէն
վկայեալ և անուանի հիւանդանոցնե-
րու մէջ գործնական փորձառութիւն
ստացած բժշկուհի . յաջողակ վի-
րահատ՝ ենթակային առանց ցաւ
պատճառելու .
Մանկաբարձուհի և մանագէտ՝
կանանց ծննդական գործարաններու
և ախրոգիտեան ախտերու, իսկ մա-
նուկներուն՝ ամէն տեսակ հիւան-
դութիւններու .
Կատարեալ խնամքով և զի-
տական նորագոյն մեթոտներու շնոր-
հիւ հիմնապէս կը բժշկէ իր խնամ-
յան նուած հիւանդները .
Հիւանդ կ'ընդունի ամէն օր կիս օրէ
յեսոյ ժամը 2-5
Ամէն երեքօրը պիտաց ձրի
գրամաւում .